ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ

ԾԱՅՐԱՀԵՂ ՎԻՃԱԿ

Երկարատև շրջափակումը ծայրահեղ վիճակի մեջ է դրել Երևանի «Լույս» արտադրական միավորման Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի կոլեկտիվին: Այսօր գործարանի հաշիվ-հաշվարկում գրեթե կոպեկ չկա բանվորներին վարձատրելու համար: Դա՝ այն դեպքում, երբ գործարանում ավելի քան երկու միլիոն ռուբլու պատրաստի արտադրանք է կուտակված: Սակայն շրջափակման պատճառով այն չի առաքվում պատվիրատուներին:

Անհրաժեշտ հումք չլինելու պատճառով գործարանի կոլեկտիվը հարկադիր պարապուրդի է մատնված: Իսկ հումքով բեռնված վագոնները մընում են Աղդամից այն կողմ՝ ադրբեջանական ժողովրդական ճակատի «հերոսների» հայեցողության տակ: Նրանք սպասում են ղարաբաղցիների պատասխան խոսքին, կարծելով, որ նման ճնշման հետևանքով նրանք կհրաժարվեն Հայաստանի հետ վերամիավորվելու մտքից:

Արցախցիները, սակայն, վաղուց են տվել իրենց պատասխանը և սպասում են, թե ինչ կասեն «վերևներում»:

Առայսօր, ցավոք, չկա մի ուժ, որ կարգի հրավիրի մեծ ճանապարհի սանձարձակ ավազակներին:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)